

տուուրթեամբ Եղիազար Վարդապետին (4 Դեկտ. 1660), որուն դէմ, այնուհետեւ, սաստիկ կը թշնամանայ Մարտիրոս Վարդապետ (12):

Իսկ 1663ի Փետրուարին, Յովհաննէս Վ. Թիւթիւնճի կաշառքով պաշտօնանկ ընել կու տայ Ղազարը, և ինք կը տիրանայ և. Պոլսո: Պատրիարքութեան: Այս փառասիրական արարքը կը կատարէ էջմիածնի նուիրակութեամբ հաւաքած դրամով: Յակոբ կաթողիկոս՝ գրութեամբ մը կը մեղադրէ անհաւատարիմ նուիրակը, և կը պահանջէ անոր պաշտօնին ընթացքին էջմիածնի անուան եղած նուիրատուութիւնները (13). նաև պոլսեցիներուն կը յայտնէ իր դժգոհանքը Յովհաննէս Վ. Թիւթիւնճիի Պատրիարքութեան նկատմամբ, և կը յարէ՝ թէ ան կեղծաւորութեամբ, յարտաքուստ իբրև հարազատ որդի, ժողովելով նուիրակութեան առատ տուրքերը, վատնեց «ի դրունս օտարաց և ի պէտս համախոհից», իր իշխանասիրութեան պատճառաւ, և էջմիածնի Աթոռին օգնելու փոխարէն, անոր մեծ փնաս հասցուց (14): Ակնարկելով Թիւթիւնճիի պատրիարքութեան, Մարտիրոս Քահանայ Քէոմիւրճեան, հայրը Երեմիա և կոմիտաս Քէոմիւրճեանց, Կ. Պոլ-

(12) Աճղ, 364—365:

(13) Ազգպ. Բ. 2531—2532:

(14) Չամչեան, Գ. 694: